# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

22 օգոստոսի 2025 թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Ռազմիկ Արզումանյանը, Անի Թենեքեջյանը, Վահե Հարությունյանը, Պավել Ցուգունյանը, Վաչագան Գրիգորյանը, Նաիրա Մելիքյանը, Գևորգ Պողոսյանը, Պետիկ Սարգսյանը, Մարգարիտա Հարությունյանը, Վրեժ Մամուլյանը, Հայկ Հարությունյանը, Վան Հարությունյանը

<u>**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էր՝**</u>
Արամ Վիրաբյանը

<u>**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը**</u>

<u>**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը**</u>

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԻՆՆԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 22-ի արտահերթ իններորդ նիստի հետևյալ օրակարգը.
1) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Արզնու խճուղու 44 հասցեում գտնվող 5.27864 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
2) Աբովյան համայնքի Առինջ գյուղի Մ. Մկրտչյան թաղամասի 1-ին փողոցի 2/2 հասցեում գտնվող 0,7 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և Աբովյան համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծում փոփոխություն կատարելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*Քվեարկության արդյունքները.*

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

Է. ԲԱԲԱՅԱՆ
Դ. ՁԱՐՈՅԱՆ
Ա. ՔՈՍԱԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԲԱԴԱԼՅԱՆ
Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ԳԵՂԱՄՅԱՆ
Ա. ՄԵՂՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 127-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԶՆՈՒ ԽՃՈՒՂՈՒ 44 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 5.27864 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ)***

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ և 7-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 28-ի N 2/փ-230 դրական եզրակացությունը, հաշվի առնելով Կոտայքի մարզպետի 2025 թվականի հուլիսի 29-ի N 01/03.1/07124-2025 գրությունը (մուտք՝ 2025 թվականի հուլիսի 29-ի N Պ-2154) և «Ավանգարդ Ինվեստ» փակ բաժնետիրական ընկերության լիազորված անձ՝ Ֆելիքս Փիրումյանի դիմումը (մուտք՝ 2025 թվականի հուլիսի 11-ի N Տ-1733), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. «Ավանգարդ ինվեստ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող (հիմք՝ 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 17112022-07-0122 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Արզնու խճուղու 44 հասցեում գտնվող 07-002-0131-0059 կադաստրային ծածկագրով 5.27864 հեկտար մակերեսով բնակավայրերի

նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողամասի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

Է. ԲԱԲԱՅԱՆ
Դ. ՋԱՐՈՅԱՆ
Ա. ՔՈՍԱԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԲԱԴԱԼՅԱՆ
Ն. ՋԱՐԳԱՐՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ԳԵՂԱՄՅԱՆ
Ա. ՄԵՂՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 128-Ա)*

---

<u>ԼՍԵՑԻՆ</u>

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ Մ. ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ 2/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,7 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ)***

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ և 7-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ, 64-րդ կետերի և հիմք ընդունելով

Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 23-ի N 2/փ-229 դրական եզրակացությունը, հաշվի առնելով Կոտայքի մարզպետի 2025 թվականի հուլիսի 25-ի N 01.2/03.1/07074-2025 գրությունը (մուտք՝ 2025 թվականի հուլիսի 25-ի N Պ-2126) և «ԱՎԱՆ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը (մուտք՝ 2025 թվականի մարտի 28-ի N Տ-876), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. «ԱՎԱՆ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող (հիմք՝ 2023 թվականի հոկտեմբերի 13-ի N 13102023-07-0071 վկայական) Աբովյան համայնքի Առինջ գյուղի Մ. Մկրտչյան թաղամասի 1-ին փողոցի 2/2 հասցեում գտնվող 07-011-0345-0011 կադաստրային ծածկագրով 0,7 հեկտար մակերեսով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության էներգետիկայի հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամաս:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մասով Աբովյան համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծի Առինջ գյուղի գոտևորման հատակագծում և տեքստային մասում կատարել փոփոխություն՝ սահմանված էներգետիկայի օբյեկտների գոտին փոփոխել միջին հարկայնության բնակելի կառուցապատման գոտու՝ ԲՆԿԳ-3:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

Է. ԲԱԲԱՅԱՆ
Դ. ԶԱՐՈՅԱՆ
Ա. ՔՈՍԱԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԲԱԴԱԼՅԱՆ
Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ԳԵՂԱՄՅԱՆ
Ա. ՄԵՂՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 129-Ա)*

**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԴԱՎԻԹ ՋԱՐՈՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՋԱՐԳԱՐՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ________________